Արձանագրություն 5

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-25/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.04.2025թ. ժամը 12:30-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ասրյան – ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության պետ,

Հանձնաժողովի անդամներ

Դ. Պետրոսյան – ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ,

Մ. Մինասյան - ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթերի հսկողության և արձանագրային բաժնի գլխավոր մասնագետ,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Ն. Գևորգյան - ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետ,

Մ. Այլանջյան – ՀՀ ֆինանսների նախարարության քարտուղարության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական:

1. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին</u>**

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ՝

1. «Սան Տելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հրավերով որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ պետք է ներկայացվեին առնվազն 2 պատշաճ ձևով իրականացրած պայմանագիր և դրանք հիմնավորելու համար տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: «Սան Տելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրերից մեկի՝ ՕԿՏ-Հ-01/22 ծածկագրով պայմանագրի

շրջանակում ներկայացված են հանձնում-ընդունումների մի մասը, ամբողջական չեն, և հնարավոր չի գնահատել ամբողջ պայմանագրի պատշաճ ձևով իրականացրած լինելը:

2. «Թիմ Սոլյուշնս» ՓԲԸ-ն հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը, որոնց գնահատումը կիրականացվի հաջորդ նիստի ժամանակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «Սան Տելեկոմ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել հայտում առկա անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-25/3» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի մայիսի 6-ին ժամը 11:30-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ասրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Դ. Պետրոսյան

_____ Մ. Մինասյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Աղաբաբյան